ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՄԻՆՍԿ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.	Անունը, ազգանունը	Գաբրիել Ղազարյան
2.	Զբաղեցրած պաշտոնը	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի առաջին տեղակալ
3.	Գործուղման վայրը և ժամկետները	2019 թվականի հունվարի 24-26-ը Մինսկ (Բելառուսի Հանրապետություն)
4.	Հրավիրող կողմը	Բելառուսի Հանրապետության սպորտի և տուրիզմի նախարարություն
5.	Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)	Գեղասահքի Եվրոպայի առաջնությանը ներկա գտնվելը: Եվրոպական մի շարք երկրների սպորտի ոլորտի պատասխանատուների հետ հանդիպելը:
6.	Քննարկված թեմաները	Տարբեր երկրների սպորտի ոլորտի պատասխանատուների հետ համագործակցության ներկայիս իրավիճակի, առկա խնդիրների և աշխատանքների հետագա ակտիվացման հեռանկարները:
7.	Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը	Հանդիպումներ են կայացել Բելառուսի Հանրապետության սպորտի և տուրիզմի նախարար Ս. Կովալչուկի, Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի փոխնախարար Շալվա Գոգոլադզեի, Զմշկավազորդների միջազգային միության փոխնախագահ Ալեքսանդր Լակերնիկի, Ռուսաստանի գեղասահքի ֆեդերացիայի գործադիր տնօրեն Ալեքսանդր Կոգանի և այլ պաշտոնատար անձանց հետ, որոնց ընթացքում քննարկվել են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր:
8.	Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը	Բելառուսի Հանրապետության սպորտի և տուրիզմի նախարար Ս. Կովալչուկի ու Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի փոխնախարար Շալվա Գոգոլադզեի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել աջակցել մարզիկներին համատեղ ուսումնամարզական հավաքների անցկացման հարցում՝ ստեղծելով

		առավել մատչելի պայմաններ վերջիններիս համար: Չմշկավազորդների միջազգային միության փոխնախագահ Ալեքսանդր Լակերնիկի հետ քննարկվել է 2021 թվականին Հայաստանում Գեղասահքի աշխարհի առաջնության անցկացման հնարավորությունը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել մեր կողմից աջակցություն ցուցաբերել աշխարհի առաջնության անցկացումը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ աշխարհի առաջնություն կազմակերպող երկիրը պետք է բավարարի մի շարք պահանջների, որոնք սահմանված են միջազգային կանոնակարգերով, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը պարտավորվել է իր լիազորությունների շրջանակներում աջակցել Չմշկավազորդների միջազգային միությանը: Չմշկավազորդների միջազգային միությունը իր հերթին պատրաստակամություն է հայտնել աջակցել հայ գեղասահորդների ուսումնամարզական հավաքների անցկացմանը: Քննարկվել է նաև մարզիչների և մրցավարների համար դասընթացների անցկացման հնարավորության հարցը:
9.	Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները	Առաջարկվել է պայմանավորված ուղղություններով համատեղել ջանքերը՝ հստակեցնելով ժամկետներն ու պատասխանատուներին:
10.	Ստորագրությունը, ամսաթիվը	29.01.2019 թ.